ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԴԾԻԳ-ԳՀԾՁԲ-18/1

ք. Երևան **«13» մարտի 2018 թ.**

ՀՀ արդարադատության նախարարության «Դատաիրավական ԾԻԳ» պետական հիմնարկը, ի դեմս տնօրեն՝ Տաթևիկ Դավթյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՕՎՆԵ» ՍՊԸ** ն, ի դեմս տնօրեն **Արմեն Բաղդասարյանի**, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **206100 (երկու հարյուր վեց հազար հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության	«ՕՎՆԵ» ՍՊԸ
«Դատաիրավական ՏԻԳ» ՊՀ	Ք. Երևան, Մյասնիկյան 43/10
Ք. Երևան, Զաքյան 3	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 16600014014440100
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00428675
Հ/Հ 900011474310	
ՀՎՀՀ 02553363	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 13 » մարտի 2018 թ. կնքված
ԴՄԻԳ-ԳՀՄՁԲ-18/1 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աղյուսակ 1
ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	50111130/1	Ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ համաձայն Աղյուսակ 2-ի (կցվում է հրավերին): 4x4 տիպի ավտոմեքենա (Միթսուբիշի պաջերո 2006թ, շարժիչը՝ 3.5լ)	դրամ	206100	1	ք.Երևան	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2017թ.՝ համաձայն աղյուսակ 2-ի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարության
«Դատաիրավական ԾԻԳ» ՊՀ
Ք. Երևան, Զաքյան 3
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011474310
ՀՎՀՀ 02553363

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՕՎՆԵ» ՍՊԸ
Ք. Երևան, Մյասնիկյան 43/10
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660001401440100
ՀՎՀՀ 00428675

(ստորագրություն)

Կ.Տ.

Աղյուսակ
<13> մարտի 2018թ. կնքված
ԴՇԻԳ-ԳՀՇՁԲ-18/1 ծածկագրով
պայմանագրի Հավելված 1-ի

(ԳՆԱՑՈՒՑԱԿ)

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ ՏՍ-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա/), ՏՍ-2 (վերանորոգման) ծառայությունների և ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

ՀՀ դրամ

NN	ՏՍ-1, ՏՍ-2 ծառայությունների և ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափաբաժնի անվանումը, Տրանսպորտային միջոցի մակնիշը/տեսակը/ Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ 4x4 տիպի ավտոմեքենա (Միթսուբիշի պաջերո 2006թ, շարժիչը՝ 3.5լ)
1	2	3
	ՏՍ-1 ներառվող ծառայությունների անվանումը	
1	Բռնկման համակարգի ստուգում	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտացման համակարգի ստուգում	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
9	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
10	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
11	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
12	ABS համակարգի ստուգում	0
13	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0
14	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0

15	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
16	**SU-2 ներառվող ծառայությունների անվանումը**	**4x4 տիպի ավտոմեքենա (Միթսուբիշի պաջերո 2006թ, շարժիչը՝ 3.5լ)**
17	Շարժիչի վերանորոգում	100000
18	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	8000
19	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	20000
20	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	0
21	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	150000
22	Շարժիչի գլխիկի վերանորոգում	30000
23	Փականի խցուկի փոխարինում	35000
24	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	0
25	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	6000
26	Հրիչների փոխարինում SOHC	0
27	Ատամնավոր փոկի փոխարինում	20000
28	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	12000
29	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	5000
30	Մխոցային օղակների փոխարինում	90000
31	Թափանիվի հանում և տեղադրում	0
32	Պարազիտային փոկանիվի հանում և տեղադրում	4000
33	**2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ**	
34	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1000
35	Յուղի պոմպի փոխարինում	3000
36	Ղեկավարման բլոկի վերանորոգում	0
37	Բռնկման կարգավորում	0
38	CO կարգավորում	0
39	Խարնարակի հանում և տեղադրում	0
40	Խարնարակի վերանորոգում	0
41	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	5000
42	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	30000
43	Բենզամղիչի փոխարինում	8000
44	Վառելիքի զտիչի փոխարինում	2000
45	վառելիքի բաքի հանում և տեղադրում	2000
46	Տրամլյորի հանում և տեղադրում	
47	Տրամլյորի վերանորոգում	
48	**3. Սառեցման և արտածման համակարգ**	

49	Հովհարի փոկի հանում և տեղադրում	4000
50	Հովհարի հանում և տեղադրում	0
51	Ռադիատորի հանում և տեղադրում	15000
52	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	15000
53	Ռադիատորի վերանորոգում	40000
54	Թերմոստատի փոխարինում	10000
55	Ջրի պոմպի փոխարինում	15000
56	Ջրի պոմպի վերանորոգում	0
57	Ընդարձակող բաքի փոխարինում	0
58	Խլարարի հանում և տեղադրում	0
59	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	3000
60	**4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ**	
61	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	0
62	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	0
63	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0
64	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	
65	Կցորդման ճոպանի հանու�և տեղադրում	0
66	ՓՏ-ի հանում և տեղադրում	0
67	ՓՏ-ի վերանորոգում	0
68	ՓՏ-ի առանցքակալի փփոխարինում	0
69	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	0
70	Ճանկի փոխարինում	0
71	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	0
72	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	0
73	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	0
74	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	60000
75	ԱՓՏ-ի վերանորոգում	80000
76	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	10000
77	**5.Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ**	
78	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	30000
79	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	8000
80	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	0
81	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	12000
82	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	0
83	**6.Առջևի և հետևի կամրջակներ**	

84	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	0
85	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	0
86	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	8000
87	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	0
88	**7. Կախոց**	
89	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	0
90	Տրավերսի հանում և տեղադրում	1000
91	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	8000
92	Անվակունդի առանցքակալի փոխարինում	10000
93	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	10000
94	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	1000
95	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	0
96	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	2000
97	Զսպանակի հանում և տեղադրում	1000
98	Զսպակի հանում և տեղադրում	0
99	Զսպակի վռանների փոխարինում	0
100	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	10000
101	Ներքևի լծակի հանում տեղադրում	10000
102	Ներքևի լծակի վռանների փոխարինում	4000
103	Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում	4000
104	Միջին ձգանի հանում և տեղադրում	0
105	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	0
106	Վերևի լծակի հանում և տեղադրում	8000
107	Վերևի լծակի վռանների փոխարինում	2000
108	Գնդե հոդակապերի փոխարինում	2000
109	Ծայրակալների հանում և տեղադրում	2000
110	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3000
111	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4000
112	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0
113	Հետևի զսպանակի փոխարինում	1000
114	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8000
115	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	0
116	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	4000
117	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	2000
118	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	8000
119	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	2000
120	Անվաբացքի կարգավորում	8000
121	Ձողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1000

122	8.Ղեկային մեխանիզմ	
123	Ղեկային կալունի հանում և տեղադրում	20000
124	Ղեկային կալունի վերանորոգում	55000
125	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	0
126	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	0
127	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	0
128	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	2000
129	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	0
130	Նույն կոդիցիոների դեպքում	0
131	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0
132	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0
133	9. Արգելակային համակարգ	
134	Գլխ.գլանի հանում և տեղադրում	5000
135	Գլխ. գլանի վերանորոգում	0
136	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	0
137	Բանվ. գլանի հանում և տեղադրում	0
138	Բանվ. գլանի վերանորոգում	0
139	Արգելակային համակարգի օդահանում	2000
140	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	4000
141	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	4000
142	Առջևի սուպպորտի վերանորոգում	0
143	Հետևի սուպպորտի վերանորոգում	0
144	Արգելակային փողրակի փոխարինում	4000
145	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	4000
146	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	4000
147	Հետևի կոճղակների փոխարինում	
148	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5000
149	Սկավառակների հղկում	5000
150	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	5000
151	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	0
152	ABS-ի հանում և տեղադրում	10000
153	ABS-ի վերանորոգում	0
154	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	0
155	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	10000
156	10.Էլեկտրասարքավորում	

157	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	0
158	Գեներատորի հանում և տեղադրում	10000
159	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0
160	Գեներատորի վերանորոգում	35000
161	Մեկնարկիչի հանում և տեղադրում	10000
162	Մեկնարկիչի վերանորոգում	25000
163	Առջևի լապտերի հանում և տեղադրում	2000
164	Հետևի լապտերի հանում և տեղադրում	2000
165	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	1000
166	Վազքաչափի հանում և տեղադրում	0
167	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	0
168	Սարքերի պանելի հանում և տեղադրում	50000
169	Արագաչափի հանում և տեղադրում	0
170	Ազդանշանի հանում և տեղադրում	2000
171	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	0
172	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	4000
173	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	0
174	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	10000
175	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	2000
176	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	0
177	Էլեկտրական տվիչների փոխարինում	1000
178	Էլեկտրական անջատիչների փոխարինում	0
179	Վառոցքի մոմերի փոխարինում	15000
180	Կոնդիցիոների լիցքավորում	5000
181	Կոնդիցիոների վերանորոգում	10000
182	**11. Այլ ծառայություններ**	
183	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գին 1 քառ.դմ-ի համար	2000
184	Անվադողի փոխարինում	500
185	Անվադողի վերանորոգում	1000
186	Անիվի բալանսավորում	1500
187	Անվահեծի վալց	6000
188	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար	1000
189	Դիմապակու փոխարինում	15000
190	**SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները**	**4x4 տիպի ավտոմեքենա (Միթսուբիշի պաջերո 2006թ, շարժիչը՝ 3.5լ)**
191	**1. Շարժիչ**	
192	Շարժիչի բլոկ	1000

193	Շարժիչի գլխիկ	1000
194	Բարձիկ	45000
195	Շարժիչի գլխակի միջադիր	22000
196	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	30000
197	Շարժիչի բաշխիչ լիսեռ	1000
198	Շարժիչի փական դուրս մղող	6000
199	Շարժիչի փական ներս մղող	7000
200	Շարժիչի փականի խցուկ	1200
201	Ծնկաձև լիսեռ	1000
202	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	6000
203	Ծնկաձև լիսեռի խցուկ հետև	12000
204	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	18000
205	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	2000
206	Հենակային տափողակ	0
207	Մխոց	1000
208	Մխոցային օղակներ	35000
209	Ատամնանիվ	0
210	Ատամնավոր փոկ	25000
211	Շղթա	0
212	Հիդրոծգան	10000
213	Հրիչ	0
214	Հրիդրոհրիչ	1000
215	Բաշմակ	0
216	Հանգստարար	0
217	Թափանիվ	0
218	Թափանիվի պսակ	0
219	Խցուկ բաշխիչ լիսեռի	5000
220	Շկիվ	0
221	Շարժաթև	0
222	Կարտերի միջադիր	5000
223	Միջադիր	9000
224	Պարազիտային փոկանիվ	8000
225	**2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ**	
226	Յուղ շարժիչի 5w-30 հանքային, 1լիտր համար (SHELL ֆիրմայի արտադրության կամ համարժեք)	6000
227	Յուղ շարժիչի 10w-40 կիսասինթետիկ 1լիտր համար (SHELL ֆիրմայի արտադրության կամ համարժեք)	4200

228	Յուղ շարժիչի 10w-40 կիսասինթետիկ 1լիտր համար	0
229	Յուղի զտիչ	5000
230	Յուղի պոմպ	1000
231	Յուղի պոմպի շարժաբեր	0
232	Յուղի ռադիատոր	2000
233	Յուղի փողրակ	0
234	Յուղի ծորակ	0
235	Վառոցքի մոմ	5500
236	Ինժեկտորի ֆորսունկա	5000
237	Վառելանյութի մղիչ էլեկտրական	35000
238	Վառելանյութի մղիչ մեխանիկական	
239	Վառելանյութի զտիչ	5000
240	Վառելանյութի փողրակ	1000
241	Աքսելերատորի ճոպան	0
242	Օդի զտիչ	8000
243	Սրահի օդի զտիչ	7000
244	Ջերմաստիճանային տվիչ	9000
245	Յուղի տվիչ	8000
246	Բաշխիչ լիսեռի տվիչ	5000
247	Օդի ծախսի տվիչ	15000
248	Արագաչափի տվիչ	8000
249	Հովհարի տվիչ	0
250	Ջրի տվիչ	0
251	Բենզոբաքի տվիչ	13000
252	Մարման ընթացքի տվիչ	1000
253	Ղեկավարման համակարգիչ	5000
254	Պարապ ընթացքի տվիչ	0
255	Դրոսելային փականի տվիչ	0
256	Թթվածնի տվիչ	4000
257	**3. Սառեցման և արտածման համակարգ**	
258	Հովհարի փոկ	0
259	Հովհար	10000
260	Ռադիատոր	20000
261	Կոնդիցիոների Ռադիատոր	15000
262	Ընդարձակող բաք	1000
263	Ռադիատորի փողրակ	3000
264	Թերմոստատ	10000

265	Ջրի պոմպ	25000
266	Ջրի պոմպի առանցքակալ	0
267	Ջրի պոմպի թևակ	0
268	Հակասառ. հեղուկ հովաց. համ. 1 լիտր	3000
269	Ջրի պոմպի սռնանիվ	0
270	Հոլովակ	6000
271	Փոկ	22000
272	Փոկ կոնդիցիոների	0
273	Ծորակ	0
274	Խլարարի ներդիր	0
275	Խլարարի կախոց	1000
276	Կրոնշտեյն	500
277	Անուր (Խամուտ)	500
278	Խլարար	5000
279	Ռեզոնատոր	0
280	Վառարանի ռադիատոր	35000
281	**4,Կցորդում, ՓՏ և ԱՓՏ**	
282	Կցորդման բանվորական գլան	0
283	Կցորդման գլխավոր գլան	0
284	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	0
285	Կցորդման տանող սկավառակ	0
286	Կցորդման տարվող սկավառակ	0
287	Կցորդման առանցքակալ	0
288	Կցորդման փողրակ	0
289	ՓՏ-ի առջևի խցուկ	0
290	ՓՏ-ի հետևի խցուկ	0
291	ՓՏ-ի առանցքակալ	0
292	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
293	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	0
294	ՓՏ-ի եղանիկ	0
295	ՓՏ-ի ատամնանիվ	0
296	Համաժամիչ	0
297	Մուֆտ	0
298	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0
299	ԱՓՏ-ի զտիչ	15000
300	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	20000
301	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	10000
302	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	0
303	ԱՓՏ յուղ, 1 լիտր	7000

304	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
305	ճանկ	3000
306	**5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ**	
307	Բաշխիչ տուփ	5000
308	Բաշխիչ տուփի խցուկ	8000
309	Բաշխիչ տութի առանցքակալ	5000
310	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0
311	Բաշխիչ տուփի լիսեռ	0
312	Կարդանային լիսեռ	1000
313	Էլաստիկ մուֆտ	0
314	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	0
315	Կարդանային լիսեռի խաչուկ	15000
316	**6. Առջևի կամ հետևի կամրջակներ**	
317	հետևի կամ առջևի կամրջակ	0
318	Ռեդուկտոր	5000
319	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0
320	Դիֆֆերենցիալ	0
321	Դիֆֆերենցիալի սատելլիտ	10000
322	Տանող ատամնանիվի խցուկ	8000
323	Տանող ատամնանիվի առանցքակալ	0
324	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0
325	Կիսասռնի	0
326	Կիսասռնու առանցքակալ	0
327	Կիսասռնու միջադիր	0
328	Կիսասռնու խցուկ	6000
329	Կարգավորիչ տափողակ	0
330	**7. Կախոց**	
331	Տրավերս	500
332	Կրոնշտեյն	1000
333	Ձախ կամ աջ հոդակապ	40000
334	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	9000
335	Անվակունդ	45000
336	Անվակունդի խցուկ	0
337	Առջևի անվակունդի ներքին առանցքակալ	0
338	Առջևի անվակունդի արտաքին առանցքակալ	0
339	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	45000
340	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	0
341	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	2000

342	Հարվածամեղմիչի թասակ	18000
343	Առջևի ցնցամեղմիչ	50000
344	Ցնցամեղմիչի թասակ	0
345	Զսպանակ	1000
346	Առջևի հարվածամեղմիչ	0
347	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	8000
348	Հարվածամեղմիչի վռան	2000
349	Ներքևի լծակ	10000
350	Ներքևի լծակի վռան	10000
351	Վերևի լծակ	8000
352	Վերևի լծակի վռան	9000
353	Գնդե հոդակապ	11000
354	Առջևի կայունարար	1000
355	Առջևի կայունարարի վռան	4500
356	Առջևի կայունարարի առջևի վռան	0
357	Հետևի կայունարարի վռան	4500
358	Հետևի զսպանակ	1000
359	Հետևի ցնցամեղմիչ	38000
360	Հետևի մետաղածող (շտանգա)	0
361	Հետևի մետաղածող (շտանգա) վռան	6000
362	Հետևի անկյունագծային լծակ	1000
363	Անկյունագծային լծակի վռան	8000
364	Զսպակ (ռեսսորա)	
365	Զսպակի վռան	
366	Զսպակի միջադիր	
367	Զսպակի բռնիչ	
368	Աջ կամ ձախ ձգան	0
369	Ծայրակալ	0
370	Ձգան մեջտեղի	0
371	Կայունարարի կանգնակ առջևի	11000
372	Կայունարարի կանգնակ հետևի	11000
373	**8. Ղեկային մեխանիզմ**	
374	Ղեկային կալուն	20000
375	Ղեկային կալունի առանցքակալ	0
376	Ղեկային կալունի խաչուկ	10000
377	Հիդրոուժեղարար	0
378	Հիդրոուժեղարարի փոկ	0
379	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	0
380	Հիդրոուժեղարարի պոմպ	25000

381	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	0
382	Ղեկային ծող	11000
383	Ղեկային ծողի ծայրակալ	9000
384	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	6000
385	Ճոճանակ	0
386	Ճոճանակի վռան	0
387	**7.Արգելակային համակարգ**	
388	Գլխ. գլան	5000
389	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
390	Վակումային ուժեղարար	0
391	Բանվ. գլան	0
392	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
393	Արգելակային փոխրակ	12000
394	Սուպպորտի ուղղորդիչ	6000
395	Սուպպորտի մոնժետ	0
396	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	22000
397	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	19000
398	հետևի թմբուկայն կոճղակների կոմպլեկտ	
399	Առջևի արգելակային սկավառակ	29000
400	Հետևի արգելակային սկավառակ	28000
401	Ձեռքի արգելակային ճոպան	5000
402	ABS-ի տվիչ	18000
403	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	4000
404	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	4000
405	Ավադող ամառ. ըստ մեքենայի գործարանային ստանդարտի	35000
406	Ավադող ձմեռ. ըստ մեքենայի գործարանային ստանդարտի	35000
407	**9. էլեկտրասարքավորում**	
408	Գեներատոր	25000
409	Գեներատորի դիոդային կամրջակ	10000
410	Գեներատորի ռելե	0
411	Գեներատորի առանցքակալ	5000
412	Ստարտեր	20000
413	Ստարտերի ռելե	0
414	Ստարտերի ածուխ	6000
415	Բենդեքս	8000
416	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	9000

417	Առջևի լապտեր	50000
418	Առջևի թարթիչ	0
419	Հետևի լապտեր	35000
420	Հետևի թարթիչ	0
421	Արգելակային լապտեր	0
422	Հակամշուշային լապտեր	0
423	Առջևի լապտերի լամպ	1500
424	Հետևի լապտերի լամպ	1500
425	Առջևի թարթիչի լապտերի լամպ	500
426	Հետևի թարթիչի լապտերի լամպ	500
427	Հակամշուշային լապտերի լամպ	3000
428	Արգելակային լապտերի լամպ	1000
429	էլեկտրական անջատիչ	3000
430	էլեկտրական տվիչ	5000
431	էլեկտրական չափիչ սարք	0
432	Բռնկման կողպեք	1000
433	էլեկտրալարերի գլխավոր խուրց	8000
434	էլեկտրալարերի երկրորդային խուրց	0
435	Վառոցքային լարերի խուրց	0
436	Վառոցքի մոմի ծայրակալ	6000
437	Վազքաչափ	0
438	Վազքաչափի ճոպան	0
439	Արագաչափ	0
440	Ազդանշան	5000
441	Դիմապակի	50000
442	Ապակելվացիչ	6000
443	Ապակելվացիչի պոմպ	5000
444	Ապակելվացիչի շարժիչ	0
445	Դռների կենտրոնական փական	1000
446	Դռան էլեկտրաամբարձիչ	5000
447	Դռան էլեկտրաամբարձիչի շարժիչ	0
448	Ներկ. լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	4000
449	Ընդամենը ըստ չափաբաժնի**	

*** Մգեցված վանդակները տվյալ չափաբաժնի համար ծառայության տեսակ չեն հանդիսանում**

1. Կատարողի ավտոտեխսպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում:

2. Սպասարկման ենթակա ավտոմեքենան պետք է պահպանվի փակ , տանիքածածկ, հսկվող տարածքում:

3. Խափանված մեքենայի մասին տեղեկություն ստանալուց հետո Կատարողը պարտավոր է Երևան քաղաքից 4 ժամվա, իսկ ՀՀ մարզերից 8 ժամվա ընթացքում իր միջոցներով, քարշակով մեքենան տեղափոխել վերանորոգման կայան՝ եթե ավտոմեքենան ենթակա չէ վարման: Խափանված մեքենայի վերաբերյալ Պատվիրատուն համապատասխան հայտ է ներկայացնում (այսուհետ՝ Ծանուցում) Կատարողին: Ծանուցման մեջ նշվում է մեքենայի մակնիշը, պետհամարանիշը, առկա թերությունների նկարագրությունը: Ծանուցումը ներկայացվում է Կատարողին էլեկտրոնային փոստի միջոցով՝ Պատվիրատուի լիազոր աշխատակիցը պայմանագրում նշված էլեկտրոնային փոստից Ծանուցման էլեկտրոնային տարբերակը պարունակող նամակ է ուղարկում Կատարողի կողմից տրամադրված և պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին: Ծանուցումը համարվում է ներկայացված՝ Պատվիրատուի էլեկտրոնային փոստի սերվերի կողմից (annatrdatyan@yahoo.com) նամակը Կատարողի էլեկտրոնային փոստի սերվերին (info@ovne.am) բարեհաջող առաքվելու պահից:	
4. Մեքենայի շարժիչների վերանորոգման երաշխիքային ժամկետը՝ առնվազն 12 ամիս, փոխանցման տուփերի, կամրջակների և ղեկային կալունի վերանորոգման երաշխիքային ժամկետը՝ առնվազն 6 ամիս:	
SU-1 ծառայությունների մատուցման ժամկետ	Ծառայությունների մատուցման պահանջ առաջանալու դեպքում Պատվիրատուն այդ մասին ծանուցում է Կատարողին: Ծանուցմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա միջակայքում Կատարողը նշանակում է ավտոմեքենայի այցելության օր՝ չորս ժամվա միջակայքում ավտոմեքենան ներկայացնելու հնարավորությամբ՝ ժամը 09:00-ից մինչև 17:00-ն՝ այդ մասին առնվազն տասներկու ժամ առաջ ծանուցելով Պատվիրատուին: SU-1 ծառայությունները ամբողջությամբ պետք է մատուցվեն ավտոմեքենան Կատարողի սպասարկման կայան ներկայացնելու օրը, եթե Պատվիրատուի համաձայնեցմամբ ավելի երկար ժամկետ չի սահմանվում:

SU-2 ծառայությունների մատուցման ժամկետ (բացառությամբ՝ Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, ՓՏ-ի և ԱՓՏ-ի վերանորոգում և Շարժիչի վերանորոգում ծառայությունների)	Ծառայությունների մատուցման պահանջ առաջանալու դեպքում Պատվիրատուն այդ մասին ծանուցում է Կատարողին: Ծանուցմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա միջակայքում Կատարողը նշանակում է ավտոմեքենայի այցելության օր՝ չորս ժամվա միջակայքում ավտոմեքենան ներկայացնելու հնարավորությամբ՝ ժամը 09:00-ից մինչև 17:00-ն՝ այդ մասին առնվազն տասներկու ժամ առաջ ծանուցելով Պատվիրատուին: Ծառայությունները ամբողջությամբ պետք է մատուցվեն ավտոմեքենան Կատարողի սպասարկման կայան ներկայացնելու պահից հաշված առավելագույնը 48 (քառասունութ) ժամվա ընթացքում, եթե Պատվիրատուի համաձայնեցմամբ ավելի երկար ժամկետ չի սահմանվում::
Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, ՓՏ-ի և ԱՓՏ-ի վերանորոգում և Շարժիչի վերանորոգում ծառայությունների մատուցման ժամկետ	Ծառայությունների մատուցման պահանջ առաջանալու դեպքում Պատվիրատուն այդ մասին ծանուցում է Կատարողին: Ծանուցմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա միջակայքում Կատարողը նշանակում է ավտոմեքենայի այցելության օր՝ չորս ժամվա միջակայքում ավտոմեքենան ներկայացնելու հնարավորությամբ՝ ժամը 09:00-ից մինչև 17:00-ն՝ այդ մասին առնվազն տասներկու ժամ առաջ ծանուցելով Պատվիրատուին: Ծառայությունները ամբողջությամբ պետք է մատուցվեն ավտոմեքենան Կատարողի սպասարկման կայան ներկայացնելու պահից հաշված առավելագույնը 240 (երկու հարյուր քառասուն) ժամվա ընթացքում, եթե Պատվիրատուի համաձայնեցմամբ ավելի երկար ժամկետ չի սահմանվում:

Հավելված N 2
« 13» մարտի 2018 թ. կնքված
ԴՏԻԳ-ԳՀԾՁԲ-18/1 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	20610	72135	72135	72135	123660	123660	123660	206100	206100	206100	206100

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով՝ ՀՀ դրամով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարության
«Դատաիրավական ԾԻԳ» ՊՀ
Ք. Երևան, Զաքյան 3
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011474310
ՀՎՀՀ 02553363

(ստորագրություն)

M.P.

ԿԱՏԱՐՈՂ

«ՕՎՆԵ» ՍՊԸ
Ք. Երևան, Մյասնիկյան 43/10
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660001401440100
ՀՎՀՀ 00428675

(ստորագրություն)

M.P.

Հավելված 3
«13» մարտի 2018թ. կնքված
ԴՇԻԳ-ԳՀՇՁԲ-18/1 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու
ՀՀ արդարադատության նախարարության
«Դատաիրավական ՇԻԳ» ՊՀ
Ք. Երևան, Զաքյան 3
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011474310
ՀՎՀՀ 02553363

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	**Ծառայությունն ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված 3.1
« 13» մարտի 2018թ. կնքված
ԴՇԻԳ-ԳՀՇՁԲ-18/1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Դատաիրավական ՇԻԳ» ՊՀ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՕՎՆԵ» ՍՊԸ –ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018 թ. մարտի _____ -ին կնքված N ԴՇԻԳ-ԳՀՇՁԲ-18/1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն